ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 773, www.court.am

№ ԴԴ-3-Ե- 5010

«03» հուլիսի 2023թ.

ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ն. ԱՂԱԶԱՐՅԱՆԻՆ
ՓԻ-ԼԵՆԴ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Գ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ

Սույնով ծանուցվում է, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար օդորակիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/25» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, մասնավորապես՝

Էյչ վի էյ սի սերվիս ՍՊԸ

- Էյչ վի էյ սի սերվիս ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը,
- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝
  - դիմում-հայտարարության երրորդ նախադասությունում նշված չէ մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,
  - դիմում-հայտարարության 1)-ին կետում ներառված չէ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/25» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին մասնակցին փոխկապակցված անձանց տվյալների համապատասխանության մասին հավաստումը,
- ներկայացված հայտում առկա փաստաթուղթը (էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) հաստատված է լիազորված անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հայտով ներկայացված՝ վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթում՝ լիազորագրում, նշված է «Դատական դեպարտամենտի կողմից ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/25 ծածկագրով մրցույթի» բառերը, այն դեպքում, երբ քննարկվող գնման գործընթացը կազմակերպվել է ոչ թե մրցույթի, այլ էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով:

ՓԻ-ԼԵՆԴ ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝
  - դիմում-հայտարարության երրորդ նախադասությունում նշված չէ մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,
  - դիմում-հայտարարության 1)-ին կետում ներառված չէ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/25» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին մասնակցին փոխկապակցված անձանց տվյալների համապատասխանության մասին հավաստումը,
- ներկայացված հայտում առկա փաստաթղթերը (էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարություն (Հավելված 1), իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3) հաստատված են լիազորված անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հայտով ներկայացված է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ՝ լիազորագիր, սակայն լիազորագրով ՓԻ-ԼԵՆԴ ՍՊԸ-ի տնօրենը լիազորել է հիշյալ անձին էլեկտրոնային ստորագրելու **մրցույթների** մասնակցության հայտեր և հայտերին առնչվող փաստաթղթեր, այն դեպքում, երբ քննարկվող գնման գործընթացը կազմակերպվել է ոչ թե մրցույթի, այլ **էլեկտրոնային աճուրդի** ընթացակարգով:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/25» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11 կետը՝ առաջարկվում է մինչև սույն թվականի **հուլիսի 04-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնվում է, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում՝ հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ **ԱՐԵՆ ՄԵՍՐՈՊՅԱՆ**

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/25» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Խաչատրյան
Հեռ.՝ /+37410/ 511-787, 511-788